ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Պետական Հատվածի Արդիականացման Երկրորդ Ծրագիր
Վարկ No. 7854-AM

Առաջադրանքի անվանումը՝ **Պաշտոնի գնահատման համակարգի մեթոդաբանության, գործընթացների, ստանդարտացված շտեմարանների մշակում և կիրառման կարողությունների ձևավորում Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական ծառայության խորհրդում և նախարարությունների մարդկային ռոսուրսների կառավարման ստորաբաժանումներում**

Հղում No. (համաձայն Գնումների Պլանի): PSMP 2 -C -3.1.3.2

Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է ստացել Համաշխարհային բանկից «**Պետական հատվածի արդիականացման» երկրորդ ծրագրի** ֆինանսավորման համար, նպատակ ունի օգտագործել այս միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների համար:

Սույն առաջադրանքի նպատակն է ունենալ քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման նոր մեթոդաբանություն, և դրա կիրառման կարողություններ քաղաքացիական ծառայության խորհրդում և համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումներում:

Նոր մեթոդաբանության անհրաժեշտությունը պայմանավորված է քաղծառայության համակարգում պաշտոնների դասակարգման, անվանացանկի փոփոխության, ինչպես նաև կառավարման համակարգում պարբերաբար վերանայվող բիզնես գործընթացների կարիքները բավարարելու տեսանկյունից:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածը կազմում է մոտավորապես 6 ամիս:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը և Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնը (ԱՖԾԿԿ) հրավիրում են խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Ավելի կոնկրետ, Հետաքրքրվածության հայտը պետք է ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը.

Հիմնական բիզնեսի եւ գործունեության տարիների մանրամասն նկարագիրը՝ ներառյալ մատուցված ծառայությունները, ավարտված ծրագրերը, հասցեները, կոնտակտային տվյալները և ընկերության հիմնական աշխատակազմի կենսագրությունները և այլն:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Գործունեության հիմնական տեսակը և տվյալ գործունեության մեջ ներգրավված լինելու տարիների քանակը

- Առաջադրանքի ոլորտում ունեցած որակավորումը

- Խորհրդատվական ընկերությունը պետք է ունենա պետական կառավարման մարմիններում պաշտոնների գնահատման կամ բիզնես պրոցեսների իրականացման վերաբերյալ ոչ պակաս, քան 3 տարվա աշխատանքի փորձ:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման Ուղեցույցների» (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին, 2010 թ-ի մայիսի 1-ին) («Խորհրդատուի ուղեցույց») 1.9 պարագրաֆին, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի «Ուղեցույցներ. ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձում» փաստաթղթում (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով հետևյալ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչ 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է գրավոր ձևով ներկայացվեն ներքոնշյալ հասցեով (անձամբ, փոստով, ֆաքսով կամ էլ-հասցեով) մինչև 2014թ. հոկտեմբերի 29-ը, ժ. 18:00 (տեղական ժամանակով):

Պրն Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
ՀՀ ֆինանսների նախարարության
Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն ՊՀ
ՀՀ, ք. Երևան 0010, Տիգրան-Մեծի 4, 3-րդ հարկ
հեռ. **(374-11) 91 05 81; (374-11) 91 05 95**
ֆաքս **(374-10) 52 87 42**
էլ. փոստ info@ffpmc.am